Արձանագրություն թիվ 7

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

06 փետրվարի 2016թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Ներկա էին խորհրդի 11 անդամները:

Օրակարգ

1. 2015-16թթ. ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակների քննարկում և հաստատում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան/
2. 2015-2016թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակեպման նախապատրաստական աշխատանքների քննարկում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան /

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2015-16թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի դասացուցակներն ըստ կուրսերի և մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է I, II, III կուրսերի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով՝ համաձայն ուսումնական պլանների և անհատական ծանրաբեռնվածության: Փոփոխությունները հետևյալն են <<Գունանկարչություն-6>> /64ժ / առարկայի ժամաքանակը կդասավանդի Հ.Ասատրյանը, իսկ <<Աշխատանք նյութի վրա-4>>/64ժ/ առարկայի լրացուցիչ ժամաքանակը Ռ.Պողոսյանը, որոնք պայմանավորված են դասավանդման արդյունավետության բարձրացման հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - <<Գծանկարի, գունանկարի և քանդակի>> ամբիոնի վարիչ Ա. Միրզոյանը, << Դեկորատիվ կիրառակա արվեստի և դիզայնի>> ամբիոնի վարիչ

Մ.Հարությունյանը: Համակարծիք լինելով վերոնշյալ փոփոխություններին , նրանք առաջարկեցին ներկայացնել տնօրինությանը հաստատելու 2015-16թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը:

ՈՐՈՇԵՑԻՆ - 2015-16թթ.ուստարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը ներկայացնել տնօրենության հաստատմանը:

Օրակարգի երկորդ հարցի մասին ֆակուլտետի գտիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը հանդես եկավ ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված ներֆակուլտետային խնդիրների վերաբերյալ հանձնարարականներով: Նա մասնավորապես նշեց, որ յուրաքանչյուր դասախոս պետք է պատրաստի իր կողմից դասավանդվող բոլոր առարկաների առարկայական փաթեթները՝ ցուցաբերելով ավելի բարձր պրոֆեսիոնալիզմ և ակտիվ օգտագործելով դասավանդման ժամանակակից մեթոդներ ՝ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Վերոնշյալ գործընթացի իրականացման վերահսկողությունը դնել ֆակուլտետի դեկանի և քարտուղարի վրա:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք.Հ.Մխիթարյան